

6086



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«30» 05 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N° 065 - 24

Նախաձեռնող՝

«Ձուլակենտրոն» ԲԲԸ

ք. Չարենցավան, Սանասար Մելտոնյանի փողոց, 32

Գործունեությունը՝

Պողպատի և թուջի ջարդոններից, պողպատե և
թուջե ձուլվածքների արտադրության
արտադրամասի վերազինում

ք. Չարենցավան, Սանասար Մելտոնյանի փողոց, 3

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 065 - 24

«30» Մայիսի 2024թ.

Պողպատի և թուջի ջարդոններից, պողպատի և թուջի ձուլվածքների արտադրամասի վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ՇՄԱԳ հաշվետվություն

Նախաձեռնող՝ «ՁՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության տեսակը՝ «Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝ ք. Չարենցավան, Սանասար Մելտոնյանի փողոց, 3

Ներածական մաս. Փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ գնահատման հաշվետվությունով գործունեությունն իրականացվելու է ք. Չարենցավան, Սանասար Մելտոնյանի փողոց, 3 հասցեում գտնվող Ձուլակենտրոն ԲԲԸ-ի սեփական գործարանի տարածքում:

Համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի, 5-րդ կետի և 18-րդ հոդվածի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

- Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել՝
- անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետման թույլտվությունը՝ N0072-23 ,
 - իրավաբանական անձի պետական գրանցման վկայական՝ N 01Ա011825
 - տարածքի սեփականության իրավունքի վկայական՝ N 0249394
 - տրված տեխնիկական առաջադրանքը՝ N SU-91-2023
 - հողի նպատակային նշանակությունը արտադրական նշանակության

Նկարագրական մաս. «Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն գործում է դեռևս խորհրդային տարիներից և տեղակայված է Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի արդյունաբերական գոտում: Բնակելի գոտուց հեռու է ավելի քան 1 կմ, շրջակայքում հանգստյան գոտիներ, բուժհաստատություններ, սննդի օբյեկտներ, դպրոցներ, մանկապարտեզներ, անտառներ, առկա չեն: Ձեռնարկությունը պողպատի և թուջի ջարդոններից ստանում է պողպատե և թուջե ձուլվածքներ: Ընկերության արտադրողականությունը տարեկան 15,000.0տ է, իսկ դրվածքային հզորությունը 50,000.0տ:

Ձեռնարկության աշխատանքային օրերի քանակը՝ 260 օր/տարի
Աշխատանքային գրաֆիկը՝ 8 ժամյա



Աշխատողների քանակը՝ 75 մարդ

Ընդհանուր տարածքը կազմում է 24.2հա, որից՝

- ▶ Արտադրական տարածքի մակերեսը – 2.6հա
- ▶ Օժանդակ տարածքների մակերեսը – 3.2հա
- ▶ Կանաչ տարածքների մակերեսը – 18.4 հա

Համաձայն տեխնոլոգիական վերազինման նախատեսվող գործունեության նպատակն է պողպատե և թուջե ձուլվածքների ստացման արտադրությունը հասցնել նախագծային 50,000.0տ/տարի: Ձուլման համար գործարկվում են 1 հատ **Ինդուկտորերմ I-832 տիպի և 1 հատ ՄԿ-10 տիպի ինդուկցիոն վառարաններ**՝ յուրաքանչյուրը 10տ հզորությամբ, Աշխատանքային լարումը՝570վ, հաճախականությունը՝ 50 հց:

Նախատեսվող գործունեության նպատակն է իրականացնել տեխնոլոգիական վերազինում պողպատե և թուջե ձուլվածքների ստացման արտադրության (15000.0տ) տարեկան արտադրողականությունը հասցնել նախագծային 50.0հազ տոննա/տարի աշխատելով օրական 24 ժամ գրաֆիկով և համապատասխան քանակի հումքի առկայության դեպքում:

Ընկերությունը նախապատրաստվում է իրականացնել ավարտական արտադրական ցիկլ, որը հնարավորություն կտա առկա պողպատի ջարդոններից պողպատե ձուլվածքների ստացման տեխնոլոգիական ցիկլին ավելացել շինարարական մետաղակոնստրուկցիաների գլանման ցիկլը:

Ընկերությունում առկա է պողպատի շարունակական ձուլման արդյունքում ստացված քառակուսի կիսապատրաստուկների հոսքագիծ: Պողպատյա կիսապատրաստուկների ստացմանն համար ընկերությունն ունի 10 տոննա արտադրողականությամբ 2 ինդուկցիոն վառարան, շարունակական ձուլման մեքենա, հալոցք տեղափոխելու համար 20 տոննա տարողությամբ ամբարձիչ, մետաղի ջարդոն տեղափոխող հատուկ տեսակի չանչային ամբարձիչ, մեծ քանակի պողպատի ջարդոն:

Ներդրումային ծրագրով նախատեսում է տարեկան արտադրել մոտ 50,000 տոննա պողպատի շարունակական ձուլման արդյունքում ստացված քառակուսի կիսապատրաստուկներ և սրա հիման վրա ստանալ մետաղակոնստրուկցիաներ՝ ամրան, անկյունակ, մետաղական լարեր:

Ընկերության աշխատողների թվաքանակը ներկայիս 75 աշխատակցից կդառնա 175 աշխատակից:

Պողպատի շարունակական ձուլման արտադրամասի դրվածքային հզորության հիման վրա պետք է ստանալ վերջնական արտադրատեսակներ և ձեռք բերել համապատասխան սարքավորումները:

Նախատեսվող գործունեության համար հիմնական հումք են հանդիսանում՝

- 1) Պողպատի ջարդոնը,
- 2) Թուջի ջարդոնը,
- 3) Սեփական արտադրության հետադարձը,
- 4) Ֆերոհամաձուլվածքները (ֆեռոմանգան, ֆեռոքրոմ, ֆեռոսիլիցիում և այլն),
- 5) Կվարցային ավազը,
- 6) Կավը:

Ձեռք բերված մետաղի ջարդոնները /ԱՏԳԱԱ ծածկագիր՝ 72042900000/ տեղափոխվում և թափվում են ինդուկցիոն հնցի մեջ: Մոտավորապես մեկ ժամ հետո



հնոցում գոյանում է ձուլված նյութ, որի ջերմաստիճանը և քիմիական բնութագրերը վերլուծման են ենթարկվում լաբորատոր ուսումնասիրության արդյունքում: Շինարարական միջազգային նորմերով ձուլակտորներ արտադրելու նպատակով՝ ըստ լաբորատոր արդյունքների վերլուծության, ձուլված նյութին ավելացվում է մանգան, սիլիցիում և այլ հավելանյութեր: Այս փուլում՝ 1670-1700°C աստիճանի ջերմության հասած, ձուլված նյութը լցվում է փաթիլի մեջ, որը նախօրոք հասցվել է 1000°C աստիճան ջերմության:

Մետաղի հալեցման պրոցեսում բովախառնուրդի մեջ եղած անպիտան նյութերը խարամի տեսքով հավաքվում են հալված մետաղի մակերևույթին և առաջացնում խարամ: Խարամը ենթակա է հեռացման, հակառակ դեպքում կխոչնդոտի որակյալ ձուլվածքի ստացմանը: Հեռացված խարամն իրենից ներկայացնում է պինդ թափոն՝ էլեկտրավառարանային ֆերոսիլիցիումի խարամ՝ 4-րդ դասի (31201810 01004) ծածկագրով:

Կաղապարախառնուրդներից ձուլվածքների մաքրման, եզրահատման ու լցոնային ձուլակտորներից անջատման պրոցեսում կաղապարախառնուրդի մի մասը, որը խիստ վառված և փոշիացած լինելու պատճառով հետագա օգտագործման համար պիտանի չէ, առանձնացվում և հեռացվում է արտադրական ցիկլից:

Ձուլման նյութը անմիջապես տեղափոխվում է թանդիշի մեջ և մեկնարկում է 150*150մմ չափսերով ձուլակտորների (կիսապատրաստուկ) շարունակական արտադրման պրոցեսը: Ձուլված նյութը անցնում է պղնձե կաղապարի միջով, որը սառեցման է ենթարկվում շրջանառու ջրի օգնությամբ: Ստացված ձուլվածքը ձգվում է լիսեռների վրա և կտրատվում է 6000մմ չափսերով: Պողպատե գլանվածքը սառեցնելու նպատակով տեղափոխվում է սառեցման համակարգ և այս փուլի ավարտից հետո ավարտվում է նաև արտադրական պրոցեսը: Արդյունքում ստացվում է քառակուսի լայնական հատույթով 150մմ-ից ոչ ավելի հաստությամբ, 0.14-ից 0.22% ածխածնի պարունակությամբ, ոչ կոռոզիակայուն պողպատյա գլանվածք /ծածկագիր՝ /7207201500/:

Ինդուկցիոն վառարանները աշխատանքի ընթացքում հովացվում են ջրի անընդհատ հոսքի պայմաններում: Մետաղի հալման ինդուկցիոն վառարանների աշխատանքի արդյունքում արտանետվում է երկաթի օքսիդ, ազոտի օքսիդներ, ածխածնի օքսիդ: Արտանետվող գազերի և պինդ մասնիկների աերոզոլային խառնուրդը նախատեսվում է հավաքել օդամաքրման համակարգում: Արտանետված գազային խառնուրդը հավաքվում է օդատար հովանոցով և մղվում է դեպի օդամաքրման համակարգ:

Ձուլման գործընթացում արտանետվում են՝ երկաթի օքսիդ 9.4 գ/կգ, ազոտի օքսիդներ 0.24 գ/կգ, ածխածնի օքսիդ 1.2 գ/կգ:

Թրծման տեղամասում տեղադրված է սայլակավոր խցիկային թրծման վառարան և անցումային չորացնող վառարան, որոնք աշխատում են բնական գազով, պահուստային վառելիք նախատեսված չէ: Այնտեղ արտանետվում են՝ ազոտի և ածխածնի օքսիդներ, որոնք հաշվարկվել են համապատասխանաբար՝ 2.15կգ/1000.0մ³ և 12.9կգ/1000.0մ³ գործակիցներով:



Արտանետված գազային խառնուրդը հավաքվում է օդատար հովանոցով և մղվում է դեպի օդամաքման համակարգ: Օդափոխության համակարգում նախատեսվող օդամղիչ սարքավորման տեսակներն են՝ ճկափողային զտիչը և խմբային ցիկլոնը: Ճկափողային զտիչը կահավորված է կայծամարիչով, զտիչի գործվածքը նախապես խոնավեցվում է, ինչը թույլ է տալիս մաքրել գազերը փոշուց և գազային խառնուկներից:

Թրծման տեխնոլոգիական սխեման ընդգրկում է երկու փուլային գազամաքման համակարգ: Հավաքված գազերը մղվում են $\phi 1100$ տրամագծով գազատար խողովակի մեջ, որտեղ տեղի է ունենում $>20PM$ մասնիկների նստեցում 10-20%: Մաքրված գազերը 12 մ բարձրությամբ և 1.2 մ տրամագիծ ունեցող խողովակի միջոցով արտանետվում են մթնոլորտ: Ընդհանուր մաքրման արդյունավետությունը կազմում է 97% : Նստեցված մասնիկներից հավաքված փոշին հանդիսանում է երկաթի օքսիդ և ձևավորվում է սորուն մասսա: Հավաքված սորուն մասսան պարբերաբար ենթակա է դատարկման և դեպի արտադրություն վերադարձի:

Համաձայն ՀՀ օրենդրության ընկերությունը ունի իր մոտ առաջացող թափոնների գոյացման նորմատիվներ և դրանց տեղադրման սահմանաքանակների թույլտվություն:

Կատարվել է մթնոլորտ աղտոտող նյութերի աղբյուրների գույքագրում: Ըստ գույքագրման արդյունքի ՄԹԱ հաշվարկի ելակետային տվյալները կազմվել և հաշվարկվել են ԳՕՍՍ 17.2.3.02-2014 -ի պահանջներին համապատասխան: Հաշվարկները կատարվել են «Տարբեր արտադրությունների կողմից մթնոլորտն աղտոտող նյութերի արտանետումների հաշվարկի մեթոդիկան» ժողովածուի հիման վրա:

Մթնոլորտ արտանետվող նյութերի տարեկան քանակը կազմում է 177,65 տոննա: Ձեռնարկության արտանետումները չեն գերազանցում այդ վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները: Տրամադրված արտանետման չափաքանակները մնում են ուժի մեջ, քանի դեռ աղտոտման անշարժ աղբյուրների և աղտոտող նյութերի մասով քանակական կամ որակական փոփոխություններ տեղի չեն ունեցել, ինչպես նաև տվյալ նյութերով ֆոնային գերնորմատիվային աղտոտվածություն չի առաջացել: Ֆոնային գերնորմատիվային աղտոտվածության առաջացման հետ կապված արտանետման չափաքանակները վերանայվում են տրամադրման պահից 5 տարվանից ոչ շուտ:

Ջեռուցման և տաք ջրամատակարարման համար վարչական շենքում տեղադրված է 1 ջրատաքացուցիչ կաթսա՝ 5մ բարձրությամբ և 0.2մ տրամագծով ծխատարով: Գազի ծախսը $10000.0\text{մ}^3/\text{տարի}$ է:

Հեռանկարում ջեռուցման և տաք ջրամատակարարման համար գազի ծախսի փոփոխություն չի նախատեսվում: Ընկերությունն ունի հաստատված ջրօգտագործման և ջրահեռացման անհատական նորմաներ՝ ըստ ՀՀ օրենդրության պահանջների :

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ի թարմ խմելու ջրի մատակարարումը իրականացվում է պայմանագրային հիմունքներով, Չարենցավան քաղաքի ջրամատակարարման ցանցից, Վեդլիա Ջուր ընկերության հետ առկա պայմանագրի հիման վրա:

Ջրօգտագործող ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն ոռոգման ջրատարից, վերցրված ջուրն օգտագործվում է կանաչ տարածքների ոռոգման նպատակով: Նախատեսվում է հետագա տարիներին սեփական տեխնիկական ջրի



աղբյուր ունենալ: Ջուրը հիմնականում օգտագործվում է՝

1. Հիմնական տեխնոլոգիական պրոցեսների՝

2. Մետաղի մեխանիկական մշակման, հաստոցների հովացման համակարգի,

3. էլեկտրո-ինդուկցիոն ձուլարանների հովացման համակարգի,

4 Ձուլվածքից ստացված դետալների կոփման համակարգի,

5. Օժանդակ ստորաբաժանումների՝ կոմպրեսորների համակարգի շահագործման ժամանակ:

6. Տնտեսակենցաղային նպատակների՝ սանիտարահիգիենիկ կարիքների, հատակի լվացման և կանաչ գոտիների ոռոգման համար:

Ոռոգման ջրատարից, ջրօգտագործման ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն վերցրված ջուրն օգտագործվում է կանաչ տարածքների ոռոգման նպատակներով:

Ձեռնարկության կոյուղու համակարգը սկիզբ է առնում վարչատնտեսական շինության տարածքից, անցնում է գործարանի տարածքով, որից հետո ուղղվում է դեպի Չարենցավանի քաղաքային կոյուղու համակարգ:

Պարճառաքանական մաս. Գնահատման հայտի շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, նախատեսվել է գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսումը և դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված համապատասխան մեղմման միջոցառումներ, դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմներ: Ինչպես արդեն նշվել է նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Ընկերության սեփականությունը հանդիսացող տարածքում և նոր տարածքների ներգրավում չի նախատեսվում, անմիջական ազդեցություն տարածքի կենդանական ու բուսական աշխարհի վրա չի նախատեսվում: Հիմք ընդունելով վերոգրյալը նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ կենսաբազմազանության վրա հնարավոր բացասական ազդեցության մեղմմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ չի նախատեսվում:

Զգայուն կլանիչների՝ մասնավորապես բնակավայրերի վրա նախատեսվող գործունեությունը ազդեցություն չունի, քանի որ մոտակա Չարենցավան քաղաքը գտնվում են համապատասխանաբար մինչև 1,0կմ հեռավորության վրա:

Բոլոր հումքատեսակների տեղափոխումն իրականացվում է փակ ծածկով ավտոտրանսպորտային միջոցներով, իսկ դրանց և արտադրական մնացորդների ընդունումը և պահեստավորումն իրականացվում են փակ շինությունների մեջ՝ դրանց համար նախատեսված համապատասխան բետոնապատ տեղամասերում, բացառելով փոշու հետևանքով տարածքի հնարավոր աղտոտումը:

Արտադրական գործունեության ընթացքում աղմուկի և թրթռման մակարդակը գտնվում է թույլատրելի սահմաններում:

Ընկերության տարածքի սահմանագծերում աղմուկի մակարդակը չի գերազանցում ֆոնային 30-40 դԲԱ:

Արտադրությունում գտնվող բոլոր էլեկտրական ենթակայանները համարված են հրդեհային ավտոմատ սարքերով, որոնք վերահսկում են տարածքներում հրդեհի



յուրաքանչյուր բռնկում և դրանց բացահայտման դեպքում ավտոմատ միացնում են հրդեհների մեկուսացման համակարգը:

Հրդեհի ժամանակ հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, միացվում է հակահրդեհային ջրի համակարգը, իսկ սպասարկող անձնակազմը տեղափոխվում է առավել անվտանգ վայր:

Նախատեսվող գործունեության՝ վերազինման, իրականացման համար լրացուցիչ տարածքների կամ նոր հողային ռեսուրսների ներառում չի նախատեսվում: Գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող և արդեն կառուցապատված՝ Ընկերության սեփականությունը հանդիսացող, արտադրական գոտու տարածքում:

Գործունեության տարածքում հողային ռեսուրսերի պահպանման հիմնական միջոցառում են հանդիսանում հումքի և արտադրական մնացորդների /թափոնների/ տեղակայման և պահեստավորման խնդիրները:

Բոլոր հումքատեսակները և արտադրական մնացորդները ընդունվում և պահեստավորվում են փակ շինության մեջ՝ դրանց համար նախատեսված համապատասխան բետոնապատ տեղամասերում, բացառելով հողածածկ տարածքները հնարավոր աղտոտումից:

Գործունեության արդյունքում առաջացած թափոնները՝ ըստ իրենց վտանգավորության դասի, Ընկերությունում հավաքվում և պահեստավորվում են դրանց համար նախատեսված ժամանակավոր կուտակման վայրերում: Այդ տարածքները կահավորված են աշխատանքի անվտանգության պահանջներից ելնելով, ինչպես նաև բնապահպանական նորմերի և պահանջների համաձայն: Կուտակված թափոնները տարածքից հեռացվում կամ տրվում են խոտանման համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպություններին, իսկ այն թափոնները որոնք հնարավոր է օգտագործել որպես երկրորդային հումք պահվում են ընկերությունում դրանց համար նախատեսված հատուկ տարածքներում՝ բացառելով հողային և ջրային ռեսուրսների հնարավոր աղտոտումը:

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ում առկա է թափոնների ժամանակավոր կուտակման բաց տիպի մեկ հրապարակ՝ մոտ 1000մ² օգտագործվող մակերեսով: Ժամանակավոր տեղադրման տարածքը առանձնացված է և համապատասխանում է բնապահպանական հետևյալ նորմերին.

- 1.Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը հասցված է նվազագույնի
- 2.Անհասանելի է կողմնակի մարդկանց համար
- 3.Հրդեհառաջացման ռիսկը գրեթե զրոյացված է
- 4.Տարածքի աղտոտումը այլ պինդ թափոններով բացառվում է
- 5.Հարմարեցված է ավտոփոխադրամիջոցներով թափոնների տեղափոխման:

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ում դեպի կոյուղու ցանց արտահոսքի ջրերը գոյանում են տնտեսակենցաղային գործունեության արդյունքում: Արտադրական ջրերը, որոնք հիմնականում գոյանում են սարքավորումների հովացման արդյունքում, շրջանառու են:

Համակարգը փակ է և արտահոսքեր դեպի կոյուղի կամ շրջակա միջավայր բացակայում են:

Վառարանները շահագործվելու են անվտանգության կանոնների խստագույն պահպանման կանոնակարգով: Սարքերը գրացված է ԱՎՕ-ների պետական ռեեստրում:



Եզրափակիչ մաս. Հանրային ծանուցումը իրականացվել է համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և ՀՀ կառավարության 1325-Ն որոշման սահմանված կարգի. քննարկումները կատարվել են Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի համայնքապետարանի շենքում: Փորձաքննական ամբողջական գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության և հակահրդեհային անվտանգության տեսչական մարմինը, Կոտայքի մարզպետարանը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակված տարբերակներում: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծության համաձայն, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կլինի թույլատրելի նորմայի սահմաններում:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

Վերագինման աշխատանքները սկսելու պահից հնարավոր ազդեցությունները մեղմելու համար անհրաժեշտ է պահպանել հետևյալ օրենսդրական պահանջները՝

- ՀՀ Կառավարության 2006թ. փետրվարի 2-ի 160-Ն որոշում՝ «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվների վերաբերյալ»:
- ՀՀ առողջապահության նախարարի 2010թ.-ի «Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները» N 2.2.5-004-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին N 27 հրաման:
- ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթրման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆ N 2.2.4-009-06 հաստատելու մասին»
- ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ. N430-Ն հրաման՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին»:
 - պահպանել տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջները
 - արտադրական պատահարները բացառելու և կանխարգելելու նպատակով արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման ամբողջ ընթացքում ապահովել տեխնոլոգիական սարքավորումների, տեխնիկական միջոցների, օբյեկտի կառույցների, տեղակայանքների անվտանգության գոտու տարածքների




պարբերական զննումներ, ինչպես նաև կազմակերպել աշխատողների ուսուցում և որակավորման ստուգում.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պողպատի և թուջի ջարդոններից ձուլվածքների արտադրամասի վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ՇՄԱԳ հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Շուշանիկ Կարապետյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան